Հայտարարվում է մրցույթներ՝ ‘ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի N 1 հիմնական դպրոց’ ՊՈԱԿ-ի տարրական դասարանների առարկաների (20 դասաժամ),«Ֆիզիկա» (12 դասաժամ) առարկայի, «Գերմաներեն» (8 դասաժամ) առարկայի, «Ռուսաց լեզու»(20 դասաժամ) առարկայի ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-‘Հանրակրթության մասին’ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձեւ 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 3–ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 21-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ,քաղաք Ճամբարակ,Պարույր Սևակի 96:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098)00-77-68 հեռախոսահամարով: